

# ՄԵՏԻԱՅԻ ԴԵՐԸ ԷԱԿԱՆ...

«Սահմանի պարագան ունի լուրջ կարեւորութիւն: Թուրքիա մեծ երկիր մըն է: Ինքնավստահութեան տէր երկիր մը չի կրնար սահմանը փակել ինքզինքը ուրիշներուն կապելով»



Մեթ Զուպուֆնու (Լուսանկար՝ Արի Թաշ)

«Փակ սահմանի երկխոսութիւն» փաստալուրտագրական ժապաւեռի թրքերէն տարբերակի առաջին ցուցադրութեան յաջորդած ասուլիսը քննարկման վերջին տեսնախօսն էր NTV-ի լրատուական բաժնի գլխավոր խմբագիր Մեթ Զուպուֆնու, որ գործը մեկնարանեց մամուլի սպասուորի մը աչքով: Ան թրքական զանգուածային լրատուութեան աշխարհէն ներս արտաքին քաղաքական նիւթերու վերաբերեալ յայտնի մեկնարան մըն է, Համապատասխան ծրագրերու պատրաստութեան առումով Հեղինակութիւն մը: Զուպուֆնու միշտ մտէն Հետեւած է նաեւ Հայ-թրքական յարաբերութիւններուն, նոյնիսկ անգամ մը Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ հարցումներ մը բերումով թիրախը դարձած՝ Ատրպէյճանի Հակազգեցյութեան:

«Փակ սահմանի երկխոսութիւն» ան արտայայտուեցաւ երկու վաստակաւոր դիւանագէտներէ վերջ: Դիւանագէտներու եւ քաղաքական գործիչներու բազմաթիւ լաւ գրաւու ընդունակութեամբ եւ վարպետ լրագրողի մը ընտրու յատկանիշները միացնելով՝ ան թէ՛ արժեւորեց Ֆիլմը եւ թէ՛ իր դիտարկումները բաժնեց Հանդիսատեսներուն Հետ, մէջբերելով նաեւ յուշեր:

«Փակ սահմանի երկխոսութիւն» յաստան կ'այցելէին, լաւ չէին ճանչնար երկիրը, Հիմնաւորեալ տեղեկութիւն մը չունէին անոր մասին: Նախապաշարումներն ալ, այդ պահու գրութեամբ, ազդեցութիւն կը գործէին իրենց վրայ: Տեղացիներուն մօտ եւս, փոխադարձաբար, զգալի էին նոյն տրամադրութիւնները: Երբ այդ տեսն առաջին անգամ այցելած էին նաեւ Միծնոնակաբերդի յուշարձանը, տակաւին չէին գիտեր, թէ այդ մէկը ինչպէ՛ս պիտի որակէին՝ Թուրքիոյ մէջ ներկայացնելու Համար: Զուպուֆնու շարունակեց.

«Վերջին անգամ այդ նոյն յուշարձանն ուղիղ եթերով սփռուած կատարեցինք 2014 թուականին: Այլուս շատ ակնի դիւրին ու Հանգիստ նախադասութիւններ կը կազմենք: Մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ մեծախառն մեծեցման ձեւը: Օրինակ՝ Հեռատեսիլով ցոյց տալ ամէն տարի 23 Ապրիլի գիշերը Երեւանի մէջ թրքական դրօշակի Հրկիզման դրբապար, թէ ոչ... Նպատակ մը կ'ապահովենք այս ձեւով: Մեծախառն ընդհանրապէս կը կողմնորոշուի ըստ յարաբերութիւններու ընթացքին: Թուրքիոյ մէջ մեծախառն կը Հետեւի քաղաքականութեան, բայց այս առումով

● շաբ. 7. 52

ՈՒՐԲԱՐ 22 ՅՈՒՆԻՍԻՐ 2016 ԲԻԿ (SAYI) 10940 ԿԻՆ 1 ԼԻՐԱ

## J A M A N A K

# ՃԱՄԱՆԱԿ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

### ՃՕ ՊԱՅՏԸՆ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՁ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Փոխ-Նախագահ Ճո Պայտըն երէկ երեկոյեան ժամերուն Հասաթուրքիա, իր կողակցին Հետ: Իր այցելութեան առաջին Հանգրուանի ծրագիրը ան այսօր կ'իրականացնէ Իսթանպուլի մէջ: «Բոնրատ» պանդոկէն ներս ան կ'որ սեղանի ձեւաչափով Հաւաքուի մը կը մասնակցի քաղաքացիական Հասարակութեան բարեփոխիչներուն Հետ: Այս Հարցին շուրջ ամերիկեան կողմի տարածած պաշտօնական Հարցազրուցութեան մէջ քաղաքացիական Հասարակութեան ներկայացուցիչները որակուած են որպէս քաղաքացիական Հասարակութեան բարեփոխիչները:

Ճո Պայտըն վաղն ալ պետական աւանդակներ կողմէ պիտի Հիւրընկալուի

● շաբ. 7. 52

## Օֆսֆորտ համալսարանի Փեմպրուֆ գոլէնը այս օրերուն կը հիւրընկալէ սփիւոֆահայ բազմաթիւ մտաւորականներ

# ԼՈՒՏՈՒՆԻ ՄԷՁ ՀԱՄԱԺՈՂՈՎ

«Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» խորագրեալ քննարկումներուն ներկայ է նաեւ ԺԱՄԱՆԱԿ-ի խմբագիր Սեւան Տէյիւմենեան

Անուշ Թրուանց կը տեղեկացնէ Լոնտոնէն.-

Երէկ երեկոյեան Օքսֆորտ Համալսարանի Փեմպրուֆ գոլէնին մէջ բացուեցաւ «Արեւմտահայերէնը 21-րդ դարուն» Համաժողովը: Օքսֆորտի Համալսարանի Արեւելագիտութեան ֆաքուլթիի Հայագիտութեան ամպիոնին նախաձեռնութեամբ կազմակերպուած այս Համաժողովը նախատեսուած է աշխատանոցի մը ձեւաչափին մէջ: Լիզպոնի «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկն ալ իր աջակցութիւնը կը բերէ այս նախաձեռնութեան:

Համաժողով-աշխատանոցին բացումը կատարուեցաւ Օքսֆորտ Համալսարանի Արեւելագիտութեան ֆաքուլթիի Տքթ. Հրաչ Զիլինկիւրեանի կողմէ: Այս առթիւ ան անդրադարձաւ սոյն Համաժողովի կազմակերպման դրդապատճառներուն եւ նպատակներուն: Զիլինկիւրեան ուղարկութիւն Հրաւիրեց այն Հանգրուաններն իրայ, թէ Եւրոպայի մէջ առաջին անգամ Համաժողով մը կը կազմակերպուի նման նիւթի մը շուրջ ու մաղթեց, որ այդ մէկը ԸՄՍՅ Հարունակալան:

Հրաչ Զիլինկիւրեանի Հետ կազմակերպչական պատասխանատուութիւնները բաժանած ակադեմիական Թէօ Ֆան Լինտ աւելի վերջ ներկայացուց ծրագրի այս բաժնի միակ բանախօսը՝ Ժրեւի Համալսարանի Հայագիտութեան ամպիոնի վարիչ Վարլենի խնդիրներուն շուրջ, մինչ իր Հետ բերած էր նաեւ մեծ Հայագէտ Հայր Արսէն Այոզնեանի (1825-1902)



Անգլիոյ Հայոց Առաջնորդ Տ. Յովակիմ Եպսկ. Մանուկեան կ'արտայայտուի համաժողովի բացման ընթացքին, ամենաձայնով՝ Սեւան Տէյիւմենեան (Լուսանկար՝ ԺԱՄԱՆԱԿ)

մայտարանի Միջերկրականի, պաւտական եւ արեւելեան լեզուներու ու քաղաքակրթութիւններու բաժանումներն մօտ: Վարլենի խօսքը արդի Հայերի այս առթիւ խօսեցաւ արդի Հայերէնի խնդիրներուն շուրջ, մինչ իր Հետ բերած էր նաեւ մեծ Հայագէտ Հայր Արսէն Այոզնեանի (1825-1902)

«Քննական քերականութիւն աշխարհագրի կամ արդի Հայերէն լեզուի» գիրքին բնօրինակը: Այս կարեւոր գործի լոյսին տակ եւ օրինակներ ալ մէջբերելով ան մասնաշնչեց Հայերէնի անցեալին ու ներկայի վերաբերեալ կարգ մը Հարցեր: Ան աշխարհագրի կարգ մը Հարցերուն շուրջ խորհրդածելու ժամանակ մէջբերեց նաեւ Մարկ Նշանեանի ուսումնասիրութիւնները: Իր անգլերէն դասախոսութեան ընթացքին Քաղաքի Հայերէնով կարգաքան նաեւ բանաստեղծութիւններն ու արտասահմանեցիկներն էին՝ որպէս օրինակ արդի Հայերէնով գրուած

գրական գործի մը: Ելոյթի աւարտին Քաղաքի պատասխանեց նաեւ ներկաներու Հարցումներուն:

Համաժողովի երէկուան բացման մասնակցութիւն բերաւ նաեւ Հասարակական Լուսարկուն Եկեղեցւոյ Անգլիոյ Թեմակալ Առաջնորդ Տ. Յովակիմ Եպսկ. Մանուկեան, որ խօսք առաւ նաեւ կարծիքի փոխանակումներու Հանգրուանին:

Այսօր Օքսֆորտ Համալսարանի նոյն գոլէնին ներս կը շարունակուի Համաժողովին աշխատանքը: Օրակարգի վրայ կը գտնուին արեւմտահայերէնի ներկայ աշխարհագրութիւնը, աշխարհագրաքաղաքական տագնապներու Հետեւանքները եւ ընկերատնտեսական մաքսուումներու ազդեցութիւնը արեւմտահայ մշակույթի վրայ գործած ազդեցութիւնը թէ՛ ներկայի եւ թէ՛ ապագայի առումով: Համաժողովի մասնակցները կը շօշափեն նաեւ Սփիւոքի մէջ արեւմտահայերէնով մտածելու եւ ստեղծագործելու խնդիրներն ու մարտահրաւերները թէ՛ գրողներու եւ թէ՛ ընթերցողներու տեսանկիւնէն: Համաժողովականները պատասխաններ կ'որոնեն նաեւ այն մասին, թէ ինչպիսի կառոյցներ, Հաստատութիւններ կամ միջոցներ անհրաժեշտ են յոռաշիկայ տասնամեակներուն արեւմտահայերէնը կենսունակ պահելու Համար:

Հարկ է նշել, որ Լոնտոնի այս Համաժողովին կը մասնակցի նաեւ ԺԱՄԱՆԱԿ օրաթերթի խմբագիր Սեւան Տէյիւմենեան:

Յրանայի Արտաքին գործոց նախարարութեան պետական քարտուզար Աննիկ Ժիրարտէն այսօր կը ժամանէ Երեւան: Զարգացման ու ֆրանսախօսութեան Հարցերով պատասխանատու Ֆրանսացի պետական քարտուզարին Հայաստանի շփումները կը տեսնել երկու օր:

Աննիկ Ժիրարտէն Երեւանի մէջ կը տեսակցի Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի, Արտաքին գործոց նախարար Եղուարդ Նալբանդեանի, Կրթութեան ու գիտութեան նախարար Արմէն Աշոտեանի Հետ: Աննիկ Ժիրարտէն կ'այցելէ նաեւ Հայաստանի Յրանայի Համալսարանը, ուր ուսանողներուն Հետ կ'ունենայ կարծիքի փոխանակումներ: Յրանայի բարձրաստիճան պաշտօնատարը կը Հանդիպի նաեւ Հայաստանի Ֆրանսախօս գործիչներուն Հետ:

Այցելութեան ծրագրին շրջագծով Աննիկ Ժիրարտէն ծագեցնելու մըն ալ կը գտնուի Միծնոնակաբերդի յուշահամալիրին մօտ, ուր կը գրուի նաեւ զանգուածային լրատուութեան միջոցներու ներկայացուցիչներուն Հետ:

## ԱՆՆԻԿ ԺԻՐԱՐՏԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ'ԱՑՅԵԼԷ

### Ա.ՀԱՐԵԿԻԶՆԵՐՈՒ ԹԻՐԱԽԸ

Տիրապալքի կեդրոնի Սուր թաղամասին ներս անվտանգութեան ուժերը կը շարունակեն պայքար մղել ասահեկանութեան դէմ: Վերջին գործողութիւններուն արդիւնքով անջատողական ասահեկան ֆոֆֆ կազմակերպութեան անդամ ասահեկանները արդէն օդակի մէջ առնուած են երկու թաղամասերէ ներս: Ոստիկաններուն աւրինթր ոստիկան զօրաց միաւորումներն ալ կը մասնակցին այս գործողութիւններուն, որոնց շրջագծով կ'արտուին բախումներ: Ահաբեկիչներ

● շաբ. 7. 52

### ԼՈՒՐԸ, ԲԱՑՑ ԲՈՒԺԵԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Հայաստանի Ազգային ժողովի «Հայ ազգային գոնիւրէ» ընդդիմադիր խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեան նախընթաց օր Երեւանի մէջ բացատրութիւններ տուաւ Լեւոն Տէր-Պետրոսեանի ատոլոլական վիճակին շուրջ: Մասիթ է, որ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Տէր-Պետրոսեան ներկայիս բուժման Համար կը գտնուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ:

### ՈՉ ԵՒՍ Է ԺԻՒՊԷՆԻ ՈՒՐ. ԴՊ. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

Խոր ցաւով վերահասու եղանք, թէ իր մահականացուն կրեած է մեր Համայնքի երէց սերունդի սիրուած ու յարգուած զէմբերէն Ժիւպէն Բարունակեան, որ երկար ժամանակ է ի վեր կը գտնուէր շարունակ նուիրեալ ծառայութիւն մատուցած էր մեր Հասարակական կեանքին ներս: Պէտք լուրի Նուստուրէն Դպրաց Դաս երգչախումբի ուխտեալ անդամ

ներէն մին էր ու դպրակապոր: Ուրաքաքի զպիւր էր Եկեղեցական անձնուրաց ծառայութեան շնորհիւ: Թրքահայ ուսուցչաց Հիմնարկի վարչութեան մօտ ալ վարած էր փոխ-ատեսնապետի պաշտօն:

Այս տխուր առթիւ երկնային Հանգրուանի Հայցեք էր Հոլաոյն ու ցաւակցութիւն կը յայտնենք իր որդւոյն Նուրհան Բարունակեանի:

ՀԱՊԵՏԱՐԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐ

# ՀԱՄԱՏՐԸ՝ ԱՆՀՐԱՊԵՏՈՒԹՅՆ

ՄԱՇՏՈՑ ԲԱԶԱՆԱՑ ԳԱԼՓԱՔՃՆԱՆ

Հաւատքի մասին յարմար կը խօսինք ի՛նչ որ բնական է, քանի որ հաւատքը՝ պայմանական անհրաժեշտութիւն մըն է, ան քրիստոնէական գործունէութիւնն իսկ է: Հաւատքը ամէն պահ մեզի հետ է կեանքին հետ համընթաց կը քայլէ մեզի հետ: Շատ անգամ չենք անդադարանար, բայց հաւատքը միշտ կա՛յ, կը մնայ մեզի հետ: Անով է որ մենք կը միանանք Քրիստոսին, մարմին ու անդամներ կը դառնանք Անոր մէջ, Անոր հետ: Մարմինը աւելի՛ մեծ է քան անդամները, եւ գանձեր իրեն կը քաշէ եւ իրեն հետ կը յառաջանի:

Այս իմաստով աղօթքն ալ անդամները մարմինն միացնող «չապախ»ն է: Աղօթաւոր բերաններ ունեցողներ որոնք անձանձրոյթ կ'աղօթեն, վերջն կը ներշնչուին: Անոնք կը միանան մարմինը՝ որպէս անդամներ: Այս կը հաստատէ Քրիստոս երբ կ'ըսէ. «Հաւատք ունեցէք Աստուծոյ վրայ: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մէկը ըսէ այս լերան՝ Ելի՛ր ու ձող ինկի՛ր, եւ իր սրտին մէջ կատարուի, այլ հաւատայ թէ ըսածը կը կատարուի, պիտի ըլլայ ի՛նչ որ ըսէ: Ասոր համար կ'ըսեմ ձեզի՛ ի՛նչ որ աղօթքով ինդրէք եւ հաւատարմ թէ պիտի ընդունիք պիտի կատարուի» (ՄԱՐԿ. ԺԱ. 22-24):

Գիտութեան յառաջացումը ստոր փաստն է եւ անոր մեծաքայլ նուաճումները: Մարդիկ հաւատք ունեցան, վատահեցան գիտութեան վրայ եւ յաջողեցան: Ուստի ի՛նչ որ իրականութիւն է նիւթական-ֆիզիքական տեսանկիւնի աշխարհին համար, նոյնն է նաեւ հոգեկան-բարոյական-մտաւոր աշխարհին համար: Էականք միշտ պատկերէ իր պայ կանգուն եւ հաստատ մնալն է: Այն որ հաստատակամ է եւ անկասկած անոր աղօթքը անկեղծ է եւ իսկութեան մէջ՝ զԱստուծոյ փառաբանող եւ Աստուծոյ մատուցած աղբիւրի մը խօսակցութիւնն է խօսակցութիւն մը՝ հօր եւ որդիին միջեւ:

Ուրեմն ասիկ կը հետեւի, թէ աղօթքի մը անհրաժեշտ տարրն է՝ հաւատքը: Այն որ հաւատքով չ'աղօթեն, անոր աղօթքը ընդունելի չ'ըլլար, քանի որ աղօթքով ապաստան «կապը» չի հաստատուիր մարդուն եւ Աստուծոյ միջեւ: Անտարբեր ու ամբարտաւան կեցողներով ինքզինք փառաբանել եւ կամ իր կատարած գործերը պատմել, ինքզինք արդարացնելու փորձեր կատարել եւ մասաւանդ իր շուրջիններուն ցուցամոդութեան ցոյցեր ընկելով ուշադրութիւն գրաւելու աշխատիլ՝ բոլորովին կը հակասեն աղօթքի գաղափարին, հետեւաբար անբախելի եւ ընդունելի՛ կ'ըլլան:

Ինքնահաւանութեամբ, գոռոզութեամբ արտասանուած ու արտայայտուած խօսքեր

երեք չեն լսուիլ եւ պիտի չունենորդուին Աստուծոյ կողմէ: Հաւատքը խոնարհութիւնն է համեստութիւնն է կամ հանձնէ՛ք, մաքուր սիրտ եւ անկեղծ արտայայտութիւն: Ուստի Աստուծոյ հետ հարգողակցութեան մէջ մտնելու, յարաբերուելու պայմանը ո՛չ միայն աղօթել է, հապա աղօթքին նախապատրաստութիւնն է ձե՛ր: Ինչպէս ըսինք, անտարբեր ու թերահաւատ ոգիով կատարուած աղօթքը երբեք նպատակաւոր մար չէ՛, այլ միայն ձեւակերպութիւն:

Կեանքի փորձառութեամբ եւ ապրուած վկայութիւններ մեզի ցոյց կու տան, թէ՛ ա՛յսօր ալ կը գտնուին համանման մարդիկ՝ որոնք ամէնուրեք կայանած Աստուծոյ կեղծ ու դիմակաւոր շնորհակալութիւն կը յայտնեն եւ ապա կը սկսին ինքնագոյութեան, ինքնափառաբանութեան եւ կը ստիպեն, կը բռնադատեն, որ իրենց շուրջինները գովաբանեն զիրենք, հրանան իրենց...:

Յաճախ կը տեսնուին այսպիսիներ, անգամ մը որ հասնին զիրքի մը, տիրանան աստիճանի մը՝ կը ջանան իշխել ու տիրել բոլոր զիրքերու, աստիճաններու՝ աստուածային նախասահմանութեան նկատելով իրենց փառքը: Մենք նկատած ենք մեծ գարմանքով ստորագաս աստիճաններու տէր եւ կեղեցական պաշտօնեաներու՝ որոնք կը շարժին բարձրաստիճան հոգեւորականներու նման: Խնդրեմ, սիրելիներ, փորձեցէ՛ք դիտել ձեր շուրջը եկեղեցւոյ մէջ՝ մեր տեսած աչքերով, եւ պիտի տեսնէք մեր նկատածները եւ իրաւացի պիտի նկատէք մեր մտահոգութիւնները այս մասին. անիշխանական, ինքնակեղծուող անհոգի կարծելով թէ անփոխարինելի են իրենք, եւ կարծելով թէ ամէնուրեք իրենց պէտքը կը զգացուի՝ մնապարծութեան հովերէ տարուած ո՛չինչ կը համարեն եկեղեցական իշխանութիւնը եւ նուիրապետական կարգը, ընդհանուր կարգը եւ կանոնը: Քիմայական որոշումներով եւ բոլորովին փառամոլութեամբ եկեղեցւոյ ծառայել կը ձեւացնեն, իրականին՝ հոն են, ուր իրենք զիրենք պիտի ցուցադրեն: Անոնց նպատակն է՛ թէ ծառայել, այլ ինքնագոյութեան առիթ ստեղծել է, այդ իսկ պատճառով հոն կ'ընթան «ծառայել»-ու դիմակով՝ ո՛ւր իրենք զիրենք ցոյց պիտի տան բազմութեան...:

Խնդրեմ անձեր են անոնք՝ բարոյովով լեցուած, իսկական ունայնամիտներ են անոնք, իրենք զիրենք «արժէք» կը կարծեն, բայց այդ կերպով կը կորսնցնեն իրենց անշնչանարժանութիւնն իսկ, կը զոհնեն իրենց արժանապատուութիւնը՝ ո՛չինչ համարելով «նկարագիր ունեցող մարդ» ու յարգելու պատիւը: Եկեղեցին պէտք չունի՛ փառամոլ-

ներու, եկեղեցին պահանջը չի՛ զգար ինքնիրմով լեցուած, ինքնիրմով հպարտ «պարպուած» ծառայողներու...: Հետեւեցէ՛ք, եւ պիտի տեսնէք զանոնք. եկեղեցի եկեղեցի, թողէ թող կը պտըտին, հոս ու հոն կը շրջին իրենք զիրենք «կարեւոր» համարել տալու համար: Պաշտօնապէս իրենց նշանակուած եկեղեցին կը թողուն եւ կ'ընթան այն եկեղեցիները՝ ուր հանդիսաւոր արարողութիւն կը կատարուի, եւ այդպիսի երեւոյթ մը ստեղծելու կ'աշխատին, թէ առանց իրենց այդ օրուան հանդիսութիւնները անկատար եւ թերի պիտի մնայ: Օրինակները մեր շուրջն է, մեր մօտը...:

Եթէ հարցնէք՝ պատրաստ է իրենց պատասխանը՝ Որպէսզի իմ օգուտս բերեմ, հրաւիրեցին զիս, չկրցի մերժել եւ գացի: Մուտ, զիրենք հրաւիրող անգամ չէ եղած, իրենք զիրենք հրաւիրուած համարած են, պարզապէս «կարեւոր» եւ «օգտակար» մարդ ըլլալուն համոզուած համար շուրջինները: Խնդրեմ, ո՛վ կը խաբես: Գուն քեզի համար կ'ընթան դուն քեզի ծառայելու համար եւ եկեղեցին գործիք կ'ընես քու քամահոգիքի...:

Այսպիսիներու նպատակը ծառայել չէ՛, այլ՝ ցուցամոլութիւն: Լա՛ւ, կ'ընթան, հապա ուրեմն ինչո՞ւ չես յարգել կարգ ու կանոնը, քու գացած եկեղեցին ալ չի գիտնո՞ր կարգ ու կանոնը, չի խորհո՞ր իմացնել պաշտօնի կարգուած եկեղեցւոյ պատասխանատուներուն, գոնէ յարգել կեցողապարական կանոնները...: Արդարեւ այն հաստատութեան մէջ, աշխարհական կամ եկեղեցական, որ չի յարգուի կարգ ու կանոն, կ'անստուի կարգապահութիւնը, անտարբեր վարմունք կը ցուցաբերուի նուիրապետական կարգին հոն ի գուր հասարակաց օգուտի մը կը սպասուի:

Անգամ մը, որ անպատասխանատու եւ իրենց քամահոգիքին համեմատ շարժող անձեր գտնուին հասարակական հաստատութեան մը մէջ՝ այլեւս հոն կը սկսի փլուզումը, եւ ո՛չ ոք իրաւունք ունի այդ փլուզումին առիթ ընծայելու իր անձնական շահուն համար, իր անկուշտ կիրքերուն համար: Եկեղեցին մասնաւոր, եւ ո՛չ մէկ հասարակական հաստատութիւն պէտք է՝ նկատուի անձնական քաջանքներու եւ շահերու միջոց, քանի որ հասարակաց օգուտն է անոնց նպատակը, եւ ո՛չ ոք իր բարոյակներուն գոհացումը փնտթէ՝ հասարակութեան ծառայելու պատրուակով խաբէութիւններու մէջ...:

Գեկտեմբեր 21, 2015, Իսրայէլ

## ՈՒԿ «ՊԱՅՔԱՐ» ԱՎՈՒՄԻ ԸՆԿԵՐՆԵՐ՝ ՄԻ՛ՆՏ ՊԱՏԵՆՇԻ ՎՐԱՅ

ՊԱՅՏԻԿ ԳԱԼԱՑՃՆԱՆ

Յունուարի 5-ին, ՌԱԿ-ի Պէյ-րութի «Պայքար» ակումբը իր հաւատարմ անդամներուն ու համակիրներուն կը ներկայանար վերականգնող ոգիով, նորանոր մարտահրաւերներ դիմադրաւելու յանդուգն կեցողութեամբ ու գաղափարական շրջանակի կարգապահ գիտակցութեամբ:

Ակնյայտ իրողութիւն է, որ ՌԱԿ «Պայքար» ակումբի եւ անոր հաւատարմ անդամներու ու համակիրներու կուսակցանքէր գործունէութեան ոլորտներն ու սահմանները մեծապէս ընդարձակուած են, եւ հրամայական անհրաժեշտութիւն է դարձած առաւել մօտէն ու անմիջականօրէն նոյնիման պատմական տարողութիւն ունեցող իր ակումբին կողմէ, որ կոչուած է ՌԱԿ-ի հարազատ արտայայտիչն ու հայելին դառնալու կուսակցութեան շինիչ, բազմակողմանի գործերուն, նպատակներուն ու տեսլականին:

ՌԱԿ՝ նման առաջադրանքներով, անհրաժեշտ նկատուեցաւ «Պայքար»ին տալ իրեն յատուկ վայելքով նոր կորով, շունչ ու թիւք, որպէսզի գաղափարակց ընկերներ կարենան մօտէն իրազեկ դառնալ ՌԱԿ-էն ներս տիրող կացութեան ու անոր գոր-



Յակոբ Վարդիվառեան եւ իր ընկերները կը հատեն կարկանդակը

ծունէութեան գրեւորումին: Գնահատելի նախաձեռնութեամբ ու արդար մտահոգութեամբ, ընդառաջելով «Պայքար» ակումբի վարչութեան հրաւերին, Նիւ Եորքէն Յակոբ Վարդիվառեան ստանձնեց նախագահութիւնը «ՌԱԿ-ի կատարած գերն ու բազմակողմ գործունէութիւնը գանազան շրջաններու մէջ: Հանդիսութիւնը տեղի ունե-

ցաւ Զաւրաթի Olivia's Sky շքեղ ճաշարահին մէջ, երկրորդին յատուկ ակնկալուածէն աւելի բազմութեամբ: Որոշեալ ժամանակ, կուսակցութեան բազմաթիւ ղեկավարներ, անդամներ, համակիրներ եւ ծանօթներ, արժեքն տեղ գրաւած էին արահին մէջ:

● շաբ. Գ. Զ

## ՈՒՔՐԱՅՆՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՊՈՒԹԻՒՆԸ 400 ՏԱՐԵԿԱՆ Է

2016 թուականը յազեցած պիտի ըլլայ Ուրբաթայն Հայկական Համայնքին համար յիշարժան տարեթիւերով, ուստի կապակցութեամբ պիտի իրականացուին գանազան ծրագրեր: Այս մասին յայտարարած է Ուրբաթայն Հայկական միութեան պատմաշահութեան ժառանգութեան հարցերով յանձնաժողովի ղեկավար պատմաբան Գալիթ Գալիթեան:

Ինչպէս նշած է պատմաբանը, Ուրբաթայն պատմականօրէն միշտ ալ եղած է երկիր մը, ուր եղած են մեծ ու կազմակերպուած Հայկական համայնքներ: «Եւ պատահական չէ, որ Լիվովի մէջ 1616 թուականին Յովհաննէս Կարամաթեցիին ստեղծած է Հայկական տպագրութիւն, որ դարձած է Հայկական գրատպութեան չորրորդ կեդրոնը Վե-

նետիկէն, Պոլսէն ու Հոնոնէն ետք», նշած է Գալիթ Գալիթեան: «Այս տարի մենք կը նշենք Ուրբաթայնի մէջ Հայկական գրատպութեան 400-ամեակը, ուրբաթահայերու առաջին տպագիր գիրքի՝ «Գալիթ եւ Սաղմոս» յոբելեանը:

«Աս շատ ուշագրաւ տարեթիւ մըն է Ուրբաթայն Հայկական Համայնքին համար, որ կը վկայէ ատոր պատմական ու մշակութային հարստագոյն ժառանգութեան մասին, որ ձեւաւորուած է դարերու ընթացքին: Լիվովի Հայկական տպագրութիւնը ցոյց կու տայ Հայկական համայնքի մտքի յառաջադիմութիւնը, անոր արժեքներն ու ներուժը անգնահատելի ղեկավարութեամբ հրատպութեան չորրորդ կեդրոնը Վե-

## Ս. ՍԱՐԳԻՍԻ ՏՕՆԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Ս. Սարգիսի տօնին՝ Յունուարի 23-ին, «Մենք մեր զինուորի կողքին ենք» ծրագրի ծրագրի ներս՝ Արարատեան Հայրապետական Թեմի առաջին անգամ ըլլալով պիտի պարգևատրէ զինուորները: Այս մասին յայտարարած է Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդանիւս Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր Նովիւ Ս. Պետրոս Ա. Քահանայ Մայրն: Ան նշեց, որ Ս. Սարգիսը եղած է զորավար եւ անոր տասնչորս զինուորներն ու իր որդին նահատակուած են Հաւաքի համար:

Իսկ պիտի կատարուի նաեւ տօնակատարութիւն, Երեւանի Կարապի լիճի մօտ տեղի պիտի ունենայ համերգ, որու ժամանակ երիտասարդները նուէրներ եւ աղի ըլլի պիտի բաժանեն ներկաներուն», ըսած է Ս. Պետրոս Ա. Քահանայ Մայրն: Նշելով, որ Ս. Սարգիսի օտնը շարժական տօն է, երիտասարդներու օրհնութեան օր: Աղի ըլլի ռուտիններուն, Ս. Պետրոս Ա. Քահանայ Մայրն խորհուրդ տուած է զայն ուսուցանելու Ս. Պետրոսի 22-ի երեկոյ ժամանակ: Ըստ իրեն, Ս. Սարգիսի տօնին աղի ըլլի ռուտինը ազգային սովորութիւն է, Հայ Առաքելական Եկեղեցին դայն ո՛չ կը մերժէ եւ ոչ ալ կը քաջալերէ:

## 2016-ԻՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՍՈՒՐԻԱԶԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ԱԶԱՅՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի յանձնարարութեամբ Երեւանի քաղաքապետարանի եւ մայրաքաղաքի վարչական շրջաններուն կողմէ 2016 թուականին եւս պիտի շարունակուին սուրբահայ ընտանիքներու աշակցութեան ծրագրերը: Այս մասին կը յայտնեն Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապուող վարչութիւնէն:

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի յանձնարարութեամբ Երեւանի քաղաքապետարանի եւ մայրաքաղաքի վարչական շրջաններուն կողմէ 2016 թուականին եւս պիտի շարունակուին սուրբահայ ընտանիքներու աշակցութեան ծրագրերը: Այս մասին կը յայտնեն Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապուող վարչութիւնէն:

2015 թուականին քաղաքապետարանի կողմէ համապատասխան գրամական եւ նիւթական օժանդակութիւն ցուցաբերուած է հազար չորս հարիւր սուրբահայ վարչերու ընտանիքի, անոնցմէ եօթնամասնակներէն՝ «էրեւանի-Երեւան 2797» տօնակատարու-

թեան ծրագրին ներս: Երեւանի մէջ ընակող սուրբահայ աւելի քան հարիւր վաթսու ընտանիք ներառուած է պետական ընկերային աշակցութեան ծրագրերին:

Մշտական ուշադրութեան ներքոյ են նաեւ քաղաքապետարանի ենթակառուցութեան մանկապարտէզներ յաճախող, ինչպէս նաեւ դպրոցական աւելի քան եօթ հարիւր սուրբահայ երախաներ: Փոքրիկներն ու պատանիները աշխուժօրէն կը ներգրաւուին կրթամշակութային տարբեր ձեռնարկներու մէջ:

Երեւանի վարչական շրջաններու ղեկավարներու աշխատակազմերը եւս պարբերաբար կ'աշակցին երեւանաբնակ սուրբահայ ընտանիքներուն:

ՀՈՒՐԻՑՈՒՄԱԿԱՆ

1-Իսթանպուլի այն թաղերէն ուր գնչուները կը գուարճացնէին այցելուները- յապաղած, 2-Աչքին մասերէն- Տրապիզոնի պատմական վանքը, 3-Երկաթաղործին սեղանը- ռուսական կարճափող հրացան, 4-Ստացական անձնակազմի մը- Գործակալութեան ակադեմիայի մը անունը- անձնական դերանուն մը, 6-Լուսանկարչական Ֆիլմի ծանօթ վաճառանիչ մը- նաւապարհի քաշածը- ռուսական իւրի մը վաճառանիչ, 7-Ձայնանիչ մը- ակումբ- ներքեւ, 8-Իրլանտական գաղտնի բանակը- ցուցական անձնակազմի մը- Իզմիրի թուղթի երբեմնի գործարարը, 9-Բաժին- նոր ժամանող, 10-Որոնիչս գետին թրքերէն ներկայ անունը- թուրք արական անուն մը- տափ մը անունը, 11-Ներկայ օրը:										
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՈՒՂԱԶԱՅՆԱՅ

1-Իսթանպուլի այն թաղերէն ուր գնչուները կը գուարճացնէին այցելուները- յապաղած, 2-Աչքին մասերէն- Տրապիզոնի պատմական վանքը, 3-Երկաթաղործին սեղանը- ռուսական կարճափող հրացան, 4-Ստացական անձնակազմի մը- Գործակալութեան ակադեմիայի մը անունը- անձնական դերանուն մը, 6-Լուսանկարչական Ֆիլմի ծանօթ վաճառանիչ մը- նաւապարհի քաշածը- ռուսական իւրի մը վաճառանիչ, 7-Ձայնանիչ մը- ակումբ- ներքեւ, 8-Իրլանտական գաղտնի բանակը- ցուցական անձնակազմի մը- Իզմիրի թուղթի երբեմնի գործարարը, 9-Բաժին- նոր ժամանող, 10-Որոնիչս գետին թրքերէն ներկայ անունը- թուրք արական անուն մը- տափ մը անունը, 11-Ներկայ օրը:

ՆԱԽԻՆԻՆԻ ԼՈՒՇՈՒՄԸ Հորիզոնական 1-Մտենադարան, 2-Ուսանող- ՆԱԹՕ, 3-Ին- «Անա», 4-Ազգայնական, 5-Տուպ- տա- ակ, 6-Առաջ- Հաստ, 7-Կող- ցոյց, 8-Թոն- վտակ, 9-Մեծամիտ- ո՛հ, 10-Իմ- ատկ, 11-Մարիքա- պիղծ: Ուղղահայեայն 1-Մուրացան- միմ, 2-Աս- գու- թեմ, 3-Տառապանք, 4-Են- ջանացի, 5-Նոտա, 6-Աղէկ- Մանրա, 7-Ատ, 8-Անպահով- սպ, 9-Իրան- աղ- տատի, 10-Աթանաս- անկ, 11-Նո- կտակ- լ(ու)ծ:

JAMANAK  
ERMENICE GÜNLÜK SİYASİ GAZETE  
Sahibi: SARKIS KOÇUNYAN  
Yazı İşleri Müdürü: NADİA KOÇUNYAN  
Basım ve Yayım: JAMANAK  
DUATEPE MAH. ŞAHADET SOK. NO: 36/4 VARTAN APT. 34379  
FERİKÖY-ŞİŞLİ/İSTANBUL ( POSTA KUTUSU 22 BEYOĞLU )  
BU GAZETE BASIN AHLAK YASASINA UYMAYI KABUL ETMİŞTİR  
YAYIN TÜRÜ YEREL SÜRELİDİR

JAMANAK  
ԺԱՄԱՆԱԿ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԻՍ

108-ԴԳ ՏԱՐԻ (22.01.2016)  
ՀԻՄՆՈՒՄ 1908-ԻՆ  
ՄԻՍՍԻՔ ԵՒ ՍԱՐԳԻՍ ԳՕՁՈՒՆԵԱՆ ԵՂԱՅՐԵՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ  
0.212.243 56 39  
0.212.243 31 96  
jamanak@jamanak.com  
www.jamanak.com



# Նորսերունդ



## Մարդասեր Մարտեր Եւ Ձմեռ

Ձմեռը մենք կը մտնենք եւ պէտք է պաշտպանուինք: Մակայն մեր մարմինը ինչպէ՞ս կը բանի այս եղանակին տոկայու համար, եւ մենք ի՞նչ նախագոտուութիւններ պէտք է անենք:

Մեր մարմինը շատ իւրայատուկ է: Անկախ ցուրտին կամ տաքին՝ մեր մարմինը միշտ նոյն ջերմաստիճանը կը պահէ: Մակայն ուշագոտութիւն ասիկա է ինչն անհրաժեշտը, որ մենք կրնանք ամէն ինչի տոկայ: Ցուրտը կրնայ վտանգաւոր ըլլալ:

### ՆԱՍ ԵՒ ԱՌԱՋ՝ ՄՈՐՔ

Մեր մարմինն տաքութիւնը 37 աստիճան է: Երբ օդը կը ցրտէ, ան պէտք է տաքութիւն արտադրէ այս ջերմաստիճանը պահելու համար, ինչպէս երբ մենք տան մէջ վտարանը կը վտանգը: Մակայն մեր մարմինը ինչպէ՞ս կը բանի: Ան տաքութիւն կը հասցնէ այն տեղը, որ պէտք է. մեր մորթին է, որ ցուրտին հետ շփման մէջ է, հետեւաբար անիկա կը գտնուի առաջին կարգին վրայ: Դուք ցուրտը կը զգաս, եւ յանկարծ մորթիդ վրայի մազերը կը կանգնին: Այդ մազերը մորթին վրայ կը կանգնին եւ իրարու միջեւ կը կապեն օդի պղտիկ բարձիկներ, որոնք մեզ ցուրտէն քիչ մը կը պաշտպանեն:

Մակայն ասիկա չի բաւեր: Մենք կը սկսինք դող-դողալու: Մեր մորթին անմիջապէս տակը գտնուող միւսները կը կծկուին եւ քիչ մը տաքութիւն կ'արտադրեն զայն տաքցնելու համար:

Եւ երբ մորթին բլիւնները ցուրտը կը զգան, անոնք ազգանդի նշան կը դրժին ուղեղին մէկ յատուկ բաժնին՝ հիպոթալամիսին:

### Ուղեղը Ղեկ էր Ստանձնէ

Երբ մեր ուղեղը կը ստանայ վտանգի ազդանշանը, ան արեւելի երակներուն կը հրահանգէ կծկուիլ մարմինն ներքին ջերմութիւնը պահելու համար: Մեր գործարանները՝ սիրտը, թոքերը, երիկամները ցուրտին չեն ստատապիր: Այս գործողութեան պատճառով արեւը նուազ կը շրջի մորթին մակերակին վրայ. դուք բնաւ նշարժած եւ, թէ ինչպէ՞ս այս պարագաներուն մեր ձեռքերը կը սպիտակին. ասիկա ցոյց կու տայ, որ ուղեղին լաւ աշխատած է:

### ՇԱՔԱՐ ԼԱՒ ՏԱՔԱԼՈՒ ՀԱՍՏԱՐ

Մեր լեարգին մէջ մենք շաքար կ'ամբարներք: Երբ օդը կը ցրտէ, ուղեղը լեարգին կը հրահանգէ արեւին շաքար զրկել կլիբքողի ձեւին տակ: Եւ ասիկա է, որ բլիւններուն կարելիութիւնը կու տայ արտադրելու ուժանիւթ... եւ հետեւաբար՝ ջերմութիւն:

### ՊԵՏ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճիշդ է, որ մեր մարմինը սքանչելի մեքենայ մըն է, որ մեզ ցուրտէն կը պահպանէ, սակայն մենք պէտք է նաեւ ուշադիր ըլլանք:

Մեր մարմինը շատ լաւ կը բանի, սակայն անոր ծայրամասերը շատ զգայուն են ցուրտին հանդէպ: Ցուրտ օդին մեր ձեռքերը, ոտքերը, գլուխը շատ շուտ կը պաղին: Անոնք մեր մարմինն այն բաժիններն են, որոնք չեն պաշտպանուած մեր մարմինն միւս բաժիններուն մէջ ամբարուած իւղին միջոցով: Հետեւաբար անոնք ցուրտին ամենէն աւելի կ'ազդուին: Կը պատահէ, որ սաստիկ ցուրտի պարագային մեր մատները կամ ականջները սառնին, եթէ մենք զանոնք չպաշտպանենք:

Մակայն ստոր կողքին կայ նաեւ ուրիշ պարագայ մը: Մեր ամբողջ մարմինը կրնայ հայտնութիւն վիճակի մէջ գտնուիլ, եթէ մենք չկարենանք անոր ջերմաստիճանը 35 աստիճանէն բարձր պահել: Մենք կը



զգանք, որ մեր մատները կ'ընդարձանան, մենք չենք կրնար մեր շարժումները համակարգել, չենք կրնար լաւ մտածել: Այս պարագային պէտք է անձը անմիջապէս տաքցնել ծածկոցներով եւ տաք ըմպելիներով:

### ՊԵՏ Է ՈՒՇԱՐԻ ԸՆԿԱ

Ցուրտէն չտուտապելու համար պէտք է քանի մը նախազգուշութիւններ անել եւ կարգ մը հնարքներ գիտնալ:

Անշուշտ ցուրտ օդին պաշտպանուելու համար պէտք է հաստ եւ տաք հագուստներ հագուել: Մակայն գիտէ՞ր, թէ նախընտրելի է, օրինակի համար, քանի մը թեթեւ հագուստներ հագուել՝ մէկ հաստ հաստ փուլովորի մը փոխարէն:

Երբ ցուրտ օդին գուրտ պիտի ելլես, խորհուրդ կը տրուի հագնել երեք խաւ: Երբ մենք իրարու վրայ քանի մը հագուստներ կը հագուինք, այս հագուստներուն միջեւ կը գտնուին օդի բազմաթիւ խաւեր, որոնք մեր մարմինն տաքութիւնը կը պահեն: Անշուշտ գուրտ ելլելու ժամանակ պէտք է մտնալ վերաբերուները, անորաքները...

Մեր ոտքերը, մեր ձեռքերը եւ գլուխը մեր մարմինն բնականօրէն ամենէն նուազ պաշտպանուած բաժիններն են. հետեւաբար կարելի է ունենալ նաեւ բուրդէ զլխարկ, ձեռնոցներ, բուրդէ գուլպաներ...

Միւս կողմը, այս տողերը կարգալու ժամանակ հաւանաբար մտածես, թէ շատ ցուրտ շրջաններու մէջ սպորտ ժողովուրդները ինչպէ՞ս կրնան սպիւր այդպիսի ծանր պայմաններու մէջ: Պարզապէս անոնք ստան լաւ յարմարած են իրենց միջովայրին: Օրինակի համար, եթէ մենք մտնենք ուսումնասիրները բեւե-



ռային շրջաններու մէջ բնակող ինուրթները, պիտի նշմարենք, թէ անոնց զեմքը աւելի կտր է եւ աւելի տափակ, քիթներին՝ աւելի փոքր: Անոնք ձեռքերն ալ աւելի փոքր են մեր ձեռքերէն... Ցուրտը կը յարձակի մեր մարմինի ծայրամասերուն վրայ. բարակ երկար մատները շատ աւելի դիրուժեամբ կը սառնին, քան կարճ մատները:

### ԿԱՐԱՆԴԻ ՈՒՄ

Կար ու չկար տղայ մը կար: Ամանորին Կարանդ պապան անոր այցելեց: Երբ ծերուկ պապուկը իր գէմը տեսաւ, տղան շատ ուրախացաւ: Կարանդ հայրիկը անոր նուէրներ տուաւ եւ անոր հետ երկու երկար խաղաց: Յաջորդ օր տղան իր նուէրները բացաւ եւ շատ ուրախացաւ: Բայց անոր համար կարեւորը նուէրները չէին, այլ կարեւորը Կարանդի ոգին էր:



փնտոցեց եւ զայն իր տունը հրաւիրեց: Արաս նախ մերձեց եղբորը առաջարկը, որովհետեւ կասկածի մէջ էր. մի գուցէ թէ օգնեց իր դրամին համար հրաւիրէր: Բայց իրականութեան մէջ այդպէս չէր: Ի վերջոյ Արաս հասկացաւ, որ եղբայրը անկեղծ է եւ ընդունեց անոր հրաւերը: Կարանդի իրիկուն թէյոյին տունը գնաց: Միասին շատ աղուր Կարանդ մը անցուցին եւ Արաս հասկացաւ, որ կեանքի մէջ դրամէն աւելի կարեւոր բաներ կան:

### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ՆԱՍԿ ԿԱՐԱՆԴ ԳԱՊԱՅԻՆ

Կարանդ պապա՛, ես քեզ շատ կը սիրեմ: Դուք ինձի սիրուն նուէրներ կը բերես եւ այդ նուէրներով դիս կ'ուրախանես: Ես այս տարի ալ քեզմէ աղուր նուէրի մը կը սպասեմ: Բայց եթէ չկարենաս գտնել, հոգ չէ: Դուք եկ'որ, ինձի կը բաւէ:

Մտ օրէն տեսնուելու յոյսով, սիրելի՛ Կարանդ պապա: Կարանդ պապա՛, ինչ կ'ըլլայ, շուտ եկ'որ, Բեդի սպասող սրտերը խնդացո՛ւր: Կ'աղաչեմ, կ'աղաչեմ, Կարանդ պապա՛, եկ'որ, Գեղեցիկ նուէրներով մեզ ուրախացո՛ւր:

### ՃԱՆԻՆ ԸՐՄԱՐ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Ե. դասարան

#### ԿԱՐԱՆԴ

Այդ օր իմ ընտանիքիս հետ տօնածառը շտկեցինք: Ռուստին եւ ես դեռ շատ փոքր էինք: Բայց նորէն ալ տօնածառը զարդարելու մայրիկիս օգնեցինք: Կարանդի իրիկուն բոլոր ազգակիները մեր տունը հաւաքուցանեցին եւ միասին ճաշեցինք: Անոնք մեզի աղուր նուէրներ բերած էին: Ռուստին նուէրը խաղալիք ինքնաշարժ մըն էր, իսկ իմ՝ գեղեցիկ պուպիկի մը: Գիշերուան ուշ ժամներուն անոնք իրենց տունները գացին, իսկ մենք ալ անկողին ուղղուեցանք եւ անուշ երազներով մինչեւ առաւօտ մշիկ-մշիկ քնացանք:

### ՆԵՆՍԻ ԹԷՄԻՋԷԼ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ԿԱՐԱՆԴԻ ՏՈՒՆ

Արայինց տունը Կարանդի ծառը շատ ուշ կը շտկուէին: Ամբողջ Դեկտեմբերը ամիսը Արային ծառ շտկելու փափաքովն ու պնդումներովը կ'անցնէր: Մայրը շատ աշխատելուն՝ տունը ծառը ուշ կը զարդարուէր: Արգէն իրենց տօնածառն ալ շատ փոքր էր:

Արային տարեդարձը Կարանդէն երեք օր ետքն էր: Երբ որ Արա տանուէր տարեկան պիտի թեւակոխէր, իր մայրն ու հայրը անոր նոր տօնածառ մը առին որպէս տարեդարձի նուէր եւ այսպէս՝ Արային գեղեցիկ անակնկալ մը բերին: Այդ տարի Արա եւ իր մայրը Կարանդի ծառը միասին շտկեցին: Արա շատ ուրախ էր. իր փափաքը իրականացած եւ ծառը կանուխէն զարդարուած էր: Այլեւս անոնք պարտաստ էին ընտանեօք երջանիկ Կարանդ մը տօնելու:

### ՆՈՐԱ ՄԱՐՏԻՑԻԱՆ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ԿԱՐԱՆԴԻ ԿԱՐԱՆԴ

Կարէն այդ օր շատ ուրախ էր, որովհետեւ Կարանդ էր: Շուտով անկողինէն ելաւ եւ երեսը լուաց: Ամենէն աղուր գգեստները հագաւ: Մեծ յուզումով կը սպասէր Կարանդ պապուկին: Արգէն այդ օր գրոցը չկար: Յանկարծ մայրը ներսէն պտտաց. «Կարէն, շուտ եկ'որ, նախաճաշը պատրաստ է»: Կարէն արագ արագ վազելով խոհանոց գնաց եւ սեղանը նստաւ: Նախաճաշի սեղանին վրայ շատ համեղ ուտելիքներ կային: Ամենէն ալ համը նայեցաւ Կարէն եւ Կարանդի ծառին քովը գնաց: Ճակը նուէրներ կային: Կարէն անհամբեր տղայ մըն էր: Բայց հիմա գանոնք չէր կրնար բանալ: Գիշ մը հետոսեպիլ դիտեց, յետոյ դասերը ըրաւ: Իրիկունը Կարէնին բոլոր ազգակիները անոնց տունը հաւաքուցանեցին: Իր մտերիմ ընկերներն անգամ եկած էին: Միասին շատ աղուր ժամանակ անցուցին: Կէս գիշերին, ծառը 12ին նուէրները միասին բացին: Բոլորն ալ շատ գեղեցիկ ու ճաշակուրդ նուէրներ էին: Ահա՛ այսպէս՝ Կարէն անցուց հաճելի Կարանդ մը:

### ՍԱՐԻՆ ԷՎԵԱՓԱՆ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ԿԱՐԱՆԴ ԳԱՊԱՅԻՆ ՈՒՐ Է

Անցեալ տարի ես Կարանդ պապային քովը աշխատեցայ: Կարանդ պապային օգնեցի, որ տղոց խաղալիքները պատրաստէ: Անոր նուէրները ծրարելուն ալ օգնեցի: Կարանդ պապան շատ բարի մարդ մըն էր: Միասին շատ լաւ ժամանակ անցուցինք: Երբ գործս աւարտեցի, ինքնաշարժ մը նստայ եւ տուն վերադարձայ: Երբ տուն հասայ, տեսայ, որ դրան տակը նամակ մը կար: Նամակին մէջ կ'ըսէր, որ Հիւսիսային բեւեռներին մէջ Կարանդ պապա մը չկայ: Եւ տարի մը ետք հասկացայ, որ Կարանդ պապան Հարաւային բեւեռ փոխարեւելի է:

### ԱՐԻՍ ԻՆՇԵՆՄԷՋ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ԿԱՐԱՆԴԻ ՇՐՈՒՄ

Կար ու չկար Արաս անուն հարուստ մարդ մը կար: Արաս չունէր ընկեր մը, որուն հետ կարենար հաճելի Կարանդ մը տօնախմբել: Թէեւ ան եղբայր մը ունէր եւ անոր անունը Թէօն էր: Մակայն երկար ժամանակ է վեր չէին տեսնուած: Թէօն աղքատ մարդ մըն էր եւ Արաս աղքատներէն շատ չէր արտերսը: Հասաւ Կարանդի օրը: Արաս շատ տխուր էր, որովհետեւ տանածին էր: Իսկ Թէօն շատ ուրախ էր, որովհետեւ Կարանդը միասին տեսելուն համար ընկերները իր տունը կանչած էր: Թէօն հեռաձայնով Արասը

## ԳիՏԻ՞՞՞՞՞, ԹԵ...

- Ֆիլիպաններու մէջ գոյութիւն ունի պանանի Քե-չալի: Բ. Համաշխարհային պատերազմին ընթացքին լոյլիկ պակաս կար. հետեւաբար մարդիկ լոյլիկ փոխարինեցին պանանով: Այս պանանի Քեչալիը պատրաստուած է ճգմուած պանանով, շաքարով, քացախով եւ հաճեմներով:
- Մեր մարմինն մէջ ամենէն զօրաւոր մկանը լեզունն է:
- Բուերը միակ թռչնազգիներն են, որոնք կրնան կապուտ գոյնը տեսնել:
- Դիփինները մէկ աչքերնին բաց կը քնանան:
- Միացեալ Նահանգներու Նեպրաքսոս նահանգին մէջ արգելուած է եկեղեցիին մէջ ձգուտայ (կազեր արտադրել) բերնէն):

տաքելի բերնէն) կամ փռնաբար:

- Բեւեռային արջերը ձայնիկ են:

- Միացեալ ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) մէջ գոյութիւն ունին վեց պաշտօնական լեզուներ՝ անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, չինարէն, ռուսերէն եւ սպաներէն:

- Այն ամիսները, որոնք Կիրակի օր մը կը սկսին, միշտ «Ուրբաթ 13» մը ունին:

- Լէնինարտո տա Վինչի կրնար մէկ ձեռքով գրել եւ միաժամանակ միւս ձեռքով գծել:



2015 թուականը անհատաբար եղած է օդերեւութաբանական դիտարկումներու պատմութեան մէջ: Այդ մասին ըստուած է NASA-ի եւ Ովկիանոսային եւ մթնոլորտային հետազոտութիւններու ազգային վարչութեան ուսումնասիրութեան մէջ: Հետազոտութեան տուեալներով մոլորակի վրայ օդի միջին ջերմաստիճանը անցեալ տարի կազմած է ըստ Մեկսիոսի՝ շուրջ 15 աստիճան, ինչ որ մտաւորապէս 0.2 աստիճանով բարձր է, քան 2014 թուականի ցուցանիշը: Զեկոյցին համաձայն՝ 2015 թուականին օդի ջերմ-

## ԱՄԵՆԱՍԱՔ ԹՈՒԿԱՆԸ

մաստիճանը 0.9 աստիճանով բարձր եղած է ամբողջ 20-րդ դարու տարեկան միջին ջերմաստիճանէն: Գիտնականները կ'ենթադրեն, որ ջերմաստիճանի բարձրացումը կապուած է «Էլ Նինիօ»-ի եւ մթնոլորտ ջերմոցային կազի արտանետումներու աւելացման հետ: Անցեալ տարուան Յունուարին գիտնականները 2014 թուականը ամենատաք ճանչցած էին օդերեւութաբանական դիտարկումներու ամբողջ պատմութեան մէջ՝ նշելով, որ ընդհանուր ջերմաստիճանը Սեպտեմբ. 0.68 աստիճանով գերազանցած է միջին ցուցանիշները: Այս տուեալները կը հաւաքուին 1880 թուականէն ի վեր: Դիտարկումներու պատմութեան ընթացքին տասնհինգ ամենատաք տարիներէն տասնչորսը 21-րդ դարուն կը պատկանին:

2015 թուականը անհատաբար եղած է օդերեւութաբանական դիտարկումներու պատմութեան մէջ: Այդ մասին ըստուած է NASA-ի եւ Ովկիանոսային եւ մթնոլորտային հետազոտութիւններու ազգային վարչութեան ուսումնասիրութեան մէջ: Հետազոտութեան տուեալներով մոլորակի վրայ օդի միջին ջերմաստիճանը անցեալ տարի կազմած է ըստ Մեկսիոսի՝ շուրջ 15 աստիճան, ինչ որ մտաւորապէս 0.2 աստիճանով բարձր է, քան 2014 թուականի ցուցանիշը: Զեկոյցին համաձայն՝ 2015 թուականին օդի ջերմ-

### ՆՈՐԱ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կարանդին չորս օր մնացած էր եւ ես շատ ուրախ էի: Անհամբերութեամբ կը սպասէի Կարանդին եւ Կարանդ պապուկին: Այդ չորս օրերը անցնելի չգիտեցան, ինձի չորս տարուան պէս եկան: Ի վերջոյ եկած հասած էր այդ մեծ օրը՝ 31 Դեկտեմբերը: Մենք ընտանեօք հօրեղբորս տունը հաւաքուցանեցինք: Ան ինձի սահման ղեկի կը տար իմ թեւակներս «մէլիճիք պոլ-կախարդական գոյակ» մը նուիրեցին: Գնդակը ձեռքի փաթիլի նման կը փայլէր: Ճիշդ կէս գիշերին սկսանք համեղ տաննէն դէպի կո՛ւ 10, 9, 8, 7, 6, 5, 4, 3, 2, 1 եւ 0: Ահաւաստի 2016 Նոր տարի մը թեւակոխած էինք: Երբ տուն վերադարձանք, ուրախութեամբ տեսանք, որ ծնողքս ալ մեզի նուէր տուած էին. եղբորս ժամացոյց մը, իսկ ինձի ալ հեռաձայն մը: Շատ ուրախ էի եւ երբ անկողին գացի, երջանութեանն էի մինչեւ առտու չկրցայ քնանալ:

### ԴԱՆԻՆԷ ՀԱՄԱՐԱԶՈՒՄԵԱՆ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ԻՍ ԿԱՐԱՆԴ

Այո՛, նորէն ժամանած է մեր ճերմակ Պայպիկը: Եկած է Նոր տարին, իր հետ բերելով նոր յոյսեր ու երազներ: Նոր տարի մը պիտի գայ: Կարանդին ամէն մարդ բան մը կ'ուզէ: Իմ միակ փափաքս է որ Նոր տարին բոլոր մարդիկ դիրար սիրեն: Կարանդի գիշեր ընտանիքիս բոլոր անդամները պիտի մէկտեղուին եւ իրարու բարի մաղթանքներ պիտի ընեն: Ամենէն ետքս ալ տասնէն դէպի գերօ համար պիտի սկսիս եւ Նոր տարին պիտի գայ: Իմ Կարանդի գիշերներս ճա՛ա՛ այսպէս են՝ ուրախ ու երջանիկ:

Ես ձեր բոլորին Նոր տարին սրտանց կը շնորհակարտիմ:

### ՍԵՐԷՆԱ ՁԻՃԹՅԻ

#### ՄԻԽԹԱՐԻԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, Է. դասարան

#### ՆՈՐ ՏԱՐԻ

Այս տարի Նոր տարին մօրաքրոջս տունը պիտի դիմաւորենք: Մօրաքրոջս շատ աղուր պատրաստութիւններ պիտի ընէ: Վատահ եմ, թէ կրկին շատ ճուր անգուստ մը պիտի

### Մ Ա Հ Ա Զ Դ

Տխար Հմայակ Ուղուրլեան եւ խօսեցեալը՝ Աննա Գեորգեան, Լորի Ուղուրլեան, Տէր եւ Տիկին Տըթ. Արա-Տըթ. Ռուզան Ուղուրլեան եւ զաւակները՝ Անայիս եւ Ալին (Աւտորիա), Տիկին Ալին Ուղուրլեան, Նուարդ եւ Անի Անդրէասեան քոյրեր (Ֆրանսա), Տիկին Անայիս Եստրազճեան, Տիկին Լուսին Աղայեան (Գերմանիա), Տէր եւ Տիկին Տըթ. Ներսէս Աղայեան եւ զաւակները (Գերմանիա), ինչպէս նաեւ Հիւսիւմեան, Վարդանան (Ֆրանսա), Գուգիւնեան (Ֆրանսա), Մելինեթի ընտանիքները եւ Համայն պարագաները սրտի անհուն կսկիծով կը գուժեն մահը՝ իրենց սիրեցեալ եւ անմոռանալի Տօր, մեծՏօր, տաղբոջ, ինամիլին եւ ազգականին՝



### ԿԱՐՊԻՍ ՈՒՂՈՒՐԼԵԱՆԻ

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը՝ 23 Յունուար 2016, Շաբաթ օր, ժամը 13.30-ին, Ֆէրիզի Ս. Վարդանանց եկեղեցին, ուրիշ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Շիշլիի գերեզմանատունը, ամփոփուելու Համար իր ընտանեկան դամբարանին մէջ:

Յուզարկաւորութիւնը տոմարի ստորագրութեամբ: Յուզ. Կազմ. (ձէ՛ԼԻԼ) ԱՐԲՈՒՆ ԱՆՄԷՐՃԵԱՆ Հեռ. (0212) 2334606 - գիշեր՝ 2476358-2301906 գրպան՝ 0542 611 21 99-0532 715 10 65

Այս ցաւալի կորուստին առթիւ մեր խոր վշտակցութիւնները Տխար Հմայակ Ուղուրլեանին եւ խօսեցեալին՝ Աննա Գեորգեանին, Լորի Ուղուրլեանին, Տէր եւ Տիկին Տըթ. Արա-Տըթ. Ռուզան Ուղուրլեանին եւ զաւակներուն՝ Անայիս եւ Ալին, Տիկին Ալին Ուղուրլեանին, Տիկին Անայիս Եստրազճեանին, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր մերձաւորներուն:

ՄԱՆՕԹ՝ Յետ թաղման ընդունելութիւն եւ կիրակնամուտի պաշտօնը պիտի կատարուին եկեղեցւոյ «Շիրինօղլու» սրահին մէջ:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ողբացեալին հարազատները հրաժեշտի յուզումնախառն Հանգուցեալին կու գան իրենց երախտագիտութիւնը արտայայտել երկու անձնաւորութիւններու նկատմամբ, որոնք մինչեւ վերջին պահը կղան իր կողքին: Անոնցմէ մին է Տ.ԲԹ. ՊԱՐԳԵՆ ԳԱԼՄԵԱՆ, որ իր մասնագիտական հոգածութեան առարկայ դարձուց Հանգուցեալը, իսկ միւս անունն է՝ Տիկին ՅԱՄՄԻԿ ՆԱԶՊԵՏԵԱՆ, որու բարեխիղճ խնամքին ներքեւ ողբացեալը աւանդեց իր հոգին երկնաւոր շօր ձեռքերուն մէջ:



### ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Նոր սրտաբեկութեամբ կը գուժենք մահը՝ Հաստատութեան վարչութեան նախկին ժրաշան անդամներէն ու Համայնքին անվճար գործիչներէն մեր ամէնուս սիրելի՝

### ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՈՒՂՈՒՐԼԵԱՆԻ

որ պիտի յիշուի միշտ իր աշխոյժ գործունէութեամբ: Այս դառն կորուստին առթիւ կը յայտնենք մեր վշտակցութիւնները իր հարազատներուն եւ մեր մտղանքը երկնային լուսաւորութիւն իր բարի հոգւոյն:

### ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԱՑ ԶԻՄՆԱՐԿԻ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԱՑ ԶԻՄՆԱՐԿԻ

### ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Երգախոսութիւն նախագահը, դպրագետը, անդամները եւ Տօրին խորհուրդը խոր ցաւով կը գուժեն մահը՝ խօսեցեալին Համայնքի, Համայնքի երախտակոր ազգայիններէն եւ մեր սիրելի անդամներէն Տեառը Հմայակ եւ Արա Ուղուրլեան եղբայրներու սիրեցեալ Տօր՝

### ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՈՒՂՈՒՐԼԵԱՆԻ

Տէրը լուսաւորէ իր հոգին եւ միխթարութիւն պարգեւէ իր սգակիր հարազատներուն:

### ԿԵՐԻՐՈՒՄԱԿԱՆ ԳՊՐԱՑ ԴԱՍ-ԵՐԳՉԱՆՈՒՄԻ

ԿԵՐԻՐՈՒՄԱԿԱՆ ԳՊՐԱՑ ԴԱՍ-ԵՐԳՉԱՆՈՒՄԻ

### ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԾԵՐԻԳԻՒՂԻ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Տէր եւ Տիկին Ժենի-Վարդան Բէօսէանի, Տէր եւ Տիկին Մարալ-Սարվէն Բէօսէանի փափաքին Համաձայն, իրենց սիրեցեալ եւ անմոռանալի մօրաբոջ՝

### ՀԱՆԳՈՒՑԵԱԼ



### ՍԵՒԱ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆԻ

մահուան քառասնից լրման առթիւ, 24 Յունուար 2016, Կիրակի օր, Ֆէրիզի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի: Յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի:

Նոյն օրը, ժամը 13.00-ին, Շիշլիի գերեզմանատան մէջ Հանգուցեալին դամբարանին վրայ մասնաւոր պաշտօն պիտի կատարուի: Ընդհանուր ձեռնարկը ԱՐԹ. Տ. ԶՕԶԻՊ ԲԷՆՑ. ԶԻՎԱՆԵԱՆԻ եւ մասնակցութեամբ դպրաց:

Զայս ր գիտութիւն կը ծանուցուի Հանգուցեալին բարի յիշատակը յարգող ազգականներու եւ բարեկամներու:

### ՈՒՔՐԱՑՆՈՑ ՄԷՋ

Մաշխարհային մշակոյթին մէջ՝ «Բանի որ սա յիշարժան տարեթիւ մըն է, մենք դեռ անցեալ տարի սկսած ենք յօրեկանին նուիրուած ձեռնարկներ իրականացնելու: 2015-ին յաջողութեամբ մեկնարկած են երկրի բազմաթիւ շրջաններու մէջ Հայկական գերբի Հիմնադրամ տեղեկու ծրագրերը, որոնք արդէն լաւ աւանդոյթ դարձած են: Իսկ այս տարի ծրագրուած են ձեռնարկներ, որոնք նուիրուած են թէ՛ Հայկական գրատպութեան յօրեկանին եւ թէ՛ այլ յիշարժան տարեթիւներու», յայտնած է Դաւիթեան:

### ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ԾԱԲՈՒՒՆ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԳԱՏՐԳԻՒՂԻ Ս. ԹԱԳԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ ՀԱՆԳԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԻ ԳԵՐՇ. Տ. ՍԱՀԱԿ Ս. ԵՊՍԿ. ՄԱՇԱԼԵԱՆԻ

23 Յունուար 2016, Շաբաթ Սկիզբ՝ 18.00

ԹԱՂԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԻ ԳԱՏՐԳԻՒՂԻ Ս. ԹԱԳԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

### ՄԵՏԻԱՅԻ ԴԵՐԸ ԷԱԿԱՍ

Վարձ այս ատուրի չորս ատենախօսներուն արտայայտութիւնները: Աւելի վերջ տեղի ունեցաւ Հարցում-պատասխանի բաժին մը: Այս փուլին անմենահետաքրքրական էր Արտաքին գործոց նախարարութեան Հետազոտութիւններու եւ անվտանգութեան փոխ-ընդհանուր տնօրէն Էլիֆ Իւլիէի արտայայտութիւնը: Ան նախ նշեց, որ ներկայացուած ֆիլմը հաւանած է ու գայն կը Համարէ առարկայական գործ մը: Սա կը Համարուի տեսողական նշում մը, ծանօթագրութիւն մը՝ տուեալ նիւթին առնչութեամբ:

Էլիֆ Իւլիէն աւելի վերջ անդադարձաւ անցեալ տարուան ու նշեց, թէ իրենք 2015 թուականը նկատած են մեծ քննութեան մը ժամանակաշրջանը: Թուրքիա անցեալ տարի մեծ քննադատութիւն մը չէ առած իր հիմնական միջազգային գործընկերներէն եւ քաղաքացիական Հասարակութեան Հարթութեան վրայ ստեղծուած ազատ բանավէճի մթնոլորտը ամբար պահած է անոր դիրքերը: Ըստ իրեն, Թուրքիա 2015-ը կրցած է յաղթահարել շնորհիւ քաղաքացիական Հասարակութեան մօտ ապրուած վէճերուն, ինչ որ ցոյց կու տայ, թէ քաղաքացիական Հասարակութիւնը պետութեան կողքին գտնուած է: Իւլիէն աւելի վերջ մատնանշեց, որ թրքական պետութեան ոճը փոխուած է այս հարցին շուրջ եւ Հանրագիտութեան նախագահ Բէճէպ Յոյլլիպ Էրտողանի մտեցումներն ալ կարեւոր դեր խաղացած են այս ուղղութեամբ: Ան վերապահութեամբ ակնարկեց 2015-ին Հարապակուած Համաձայնական հռչակագրին, մասնաւորապէս անոր բովանդակութեան մէջ Սեւրի Համաձայնագրին կատարուած յղումին բերումով: Էլիֆ Իւլիէի խօսքով, աւելիակութիւնը այն էր՝ որ 2015-ին վերջ կարգը պիտի գար բնակչությանց մասին, սակայն ներկայիս այս ուղղութեամբ կը պակսի եռանդը:

Հարցում-պատասխանի բաժին վերջ սարքեցաւ ընդունելութիւն մը, որու ընթացքին եւս ներկաները անմիջական մթնոլորտի մը մէջ ջրաբեցին իրարու հետ:

### ԶԷՔԻԵԱՆ ԳԵՐԱՊԱՑԾԱՌ ԵՐԷԿ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԲԱՆԱԽՕՍՍԵՑ ՊՈՄՐՈՒԹԻ ԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ



ԶԷՔԻԵԱՆ ԳԵՐԱՊԱՑԾԱՌ ԵՐԷԿՈՑԵԱՆ ԲԱՆԱԽՕՍՍԵՑ ՊՈՄՐՈՒԹԻ ԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

### ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Նոր վշտով տեղեկացանք մահը՝ մեր Համայնքի ու Գալֆանան ընտանիքի շատ սիրելի եւ յարգարժան անձնաւորութիւններէն՝

### ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՈՒՂՈՒՐԼԵԱՆԻ

Երկար տարիներ ան վարժարանիս ինամակաւորութեան ատենապետի պաշտօնը վարած էր գծուարին պայմաններու տակ: Ողբացեալը նաեւ որդին էր մեր նախկին կրթական մշակ ու տնօրէններէն Հոգեկոյս Տ. Տրդատ ԲՀՆյ. Ուղուրլեանի:

Այս անդամներու կորուստին առթիւ մեր խորին վշտակցութիւնները կը յայտնենք իր հարազատներուն ու մերձաւորներուն:

Տէրը միխթարութիւն թող պարգեւէ բոլորին ու երկնային հանգիստի արժանացնէ Հանգուցեալին հոգին:

### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼՅԱՆՍԱՆ ՏԱՆ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼՅԱՆՍԱՆ ՏԱՆ

### ՌԱԿ «ՊԱՅՔԱՐ» ԱԿՈՒՄԲԻ

ՌԱԿ-ի Հիմնը յոտնկայ ունեցողիկէ ետք, բացման խօսքով Հանգուցեալ եկաւ ՌԱԿ «Պայքար» ակումբի փոխատենապետ Կարո Յակոբեան, որ սեղմ, այլ բովանդակային գիծերու մէջ ներկայացուց ՌԱԿ-ի առաջադրանքներն ու նպատակը, տօնակատարութեան ընդունելու, որուն նախագահ Վարդիվառեանի ունեցած դերակատարութիւնը ՌԱԿ-ին ներս եւ իր շնորհակալական խօսքը ուղղեց բոլոր ներկաներուն, որոնք բաշխելի Հանգուցեալին տոյն ձեռնարկի իրագործման:

Երեկոյթին երաժշտական բաժնին յատուկ Հմայք տուին Բաֆֆի Տօնէրեան երգեհոնի նուագակցութեամբ եւ սփուրջահայ երգիչ Բաֆֆի Կեպուրյանեան, որոնք մթնոլորտը ճորտացուցին Հայրենասիրական, սիրային Հայրենի թէ՛ օտար ծանօթ երգերով: Ապա բեմահարթակ հրաւիրուեցաւ ՌԱԿ-ի Կեպուրյան վարչութեան երկարամեայ նախկին ատենապետը եւ թՄՄ-ի Հիմնադիրներու մարմնի նախկին ատենապետը Արտաւազը Մեղրիսեան, որ իւրայայտուկ ոճով Հանգիստեաներուն ներկայացուց Յակոբ Վարդիվառեանը, որ Հետաւոր Ամերիկայէն յատուկ առաքելութեամբ ներկայ կը գտնուէր Լիբանան:

Յատկանշական էր Վարդիվառեանի կոյրիքը, որ արժանացաւ բոլոր ներկաներու գնահատանքին: Ան նախ յայտնեց իր անհուն ուրախութիւնը «Պայքար» ակումբի ժրաշան վարչութեան, որ ոգի ի բուն գործունէութիւն կը ծաւալէ իրենց շուրջ Համայնքի երիտասարդ ու կորովի երիտասարդներ, որոնք ամէն ճիգ ի գործ կը դնեն բարձր պահելու Համար ՌԱԿ-ի վարին ու արժանապատուութիւնը: Ապա ան ներկայացուց ՌԱԿ-ի ազգային-եկեղեցական ուղեգիրը: «ՌԱԿ-ը ոչ միայն ազգային կազմակերպութիւն մըն է, այլեւ ազգային եկեղեցական յատուկ ու ընդուն Հայրենասիրութեան եւ առաջադրանքներ ունեցող կուսակցութիւն, որուն սնունդի աղբիւրը ու գոյատեւման խորհրդանշանները կը Հանգիստեան Հայաստանն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», ըսաւ Վարդիվառեան ու տեսնելով ներկայ գտնուող երիտասարդ ընկերներու խանդավառութիւնը, շարունակեց իր կուռ ու տպաւորիչ կոյրիքը, շնորհ դնելով նորահաս գաղափարակից սերունդին վրայ, որուն անդամները իրեն կուսակցականներ պիտի ըլլային ազգային Հետապայ մեր գործիչները: Այնուհետեւ Վարդիվառեան ընդգծաւ կելով իր նիւթը, Համայնք ու տրամաբանական մտեցումով միաձուլեց ՌԱԿ-ն ու ԹՄՄ-ը իրեն երկու անբաժանելի ամբարձու օղակներ, որոնք կը Հետապնդեն ու կը ձգտին նոյն նպատակին: Հայրենասիրութեան, Հայրապահպանման եւ Հայ ոգիի պահպանման Համար անդադրուծ պայքար...:

Ապա իր խօսքը ընդհանրացնելով, Վարդիվառեան ընդգծեց, թէ մեր բոլոր աշխատանքները բարւոք ու փայլուն արգասիքներու Հասցեւոր Համար, անհրաժեշտ են անտեսական նոր նախաձեռնութիւններու, նոր ղեկավարութեան անյապաղ ընտրութեան, նոր կորով, նոր աւելն է պէտք վերականգնած տեսնելու Համար այն բոլոր արժէքներ, որոնք միայն պատիւ կը բերէին իւրաքանչիւր արժանապատուութիւն ունեցող ուսմակար ազատականին: Ան կոչ ըրաւ տարողներու Հարցեր վերամիացնելու եւ միութիւն ստեղծելու ՌԱԿ-ի շարքերէն ներս, վերադարձնելու Համար կուսակցութեան անցեալի լրջութիւնը եւ յարգանք պարտադրելու Համար մեզի բարեկամ ու այլ կազմակերպութիւններուն: Նոր ժամանակաշրջանի ազգային պահանջներուն Հասցեւոր թէ՛ Հայրենական մարտահրաւիրներուն կարեւոր գիմագրանելու Համար անհրաժեշտ է վերամիաւորել մեր բոլոր ուժերը անխտիր:

Մեծ խանդավառութիւն ստեղծող Վարդիվառեանի կուռ կոյրիկէ ետք, սրտաբուխ նուիրատուութիւններ տեղի ունեցան, մինչ վարչականուհիներ կը բաշխէին վիճակագրական տոնակներ, իսկ շահագործող կը տասնային արժէքաւոր նուէրներ: Երեկոյթը իր աւարտին կը մօտենար, երբ տեղի ունեցաւ աւանդական կարկանդակի Համար արարողութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ներկայ գտնուող ղեկավարներ Յակոբ Վարդիվառեան, Արտաւազը Մեղրիսեան, Նշան Պարտիվեան եւ «Պայքար» ակումբի վարչականները:

Իրապէս, ՌԱԿ «Պայքար» ակումբի կորովի անդամները արժանի են ամէն գրուատիքի ու խրախուսանքի, կազմակերպած ըլլալու Համար այսպիսի ուշագրաւ Հանգիստութիւն մը:

### ՃՕ ՊԱՅՏԸՆ ԹՈՒՐԻԿԻՈՑ ՄԷՋ

ՃՕ ՊԱՅՏԸՆ ԹՈՒՐԻԿԻՈՑ ՄԷՋ

Պարձեալ Իսթանբուլի մէջ: Այսպէս, Տոյնպահանջի պատիւի Համայնքին ներս, վարչապետարանի հրահանակի յարկէն ներս ՃՕ Պայքար նախ Կարկանդակով Վարչապետ ԱՀՄՄ Տափուօղլուի կողմէ: Պաշտօնական ծրագրին վրայ այս Հանգիստեան Համար դրուած է մէկուկէս ժամուան ժամանակ մը: Տափուօղլու եւ Պայքար պիտի սարքեն նաեւ Համատեղ մամուլ ատուրի մը:

Երբ ընդհատ պատիւի Համայնքին ներս ՃՕ Պայքար պիտի Հիւրընկալուի նաեւ Հանրապետութեան Նախագահ Բէճէպ Թայյիպ Էրտողանի կողմէ: Յետմիջօրէի այս տեսակցութիւնով պիտի եզրափակուի ԱՄՆ-ի փոխ-նախագահին Թուրքիա այցելութեան ծրագիրը: Եւ ան աւելի վերջ Զեմաշտ պիտի անէ Թուրքիայէն:

### ԱՀԱԲԵԿԻԶՆԵՐՈՒ ԹԻՐԱԽԸ

ՍՍԹԱՐ՝ օրաթերթի յայտարարութեան Հարգողներով, ահաբեկիչները կը շարունակեն իրենց թիրախ գործնել նաեւ շրջանի սրբավայրերը: Նախապէս Գուրուշուլու մզկիթը հրկիզած ահաբեկիչները Հիմա ալ սկսած են իրենց Համար որպէս խարխուռ օգտագործել Ս. Կիրակոս Հայոց եկեղեցին եւ քաղաքացիներու եկեղեցին: Ըստ նոյն աղբիւրին, աւելի առաջ ստուգուած էր, թէ ահաբեկիչները կը ձգտին եկեղեցիները վնասելով պատասխանատուութիւնը վերագրել անվտանգութեան ուժերուն: Մինչ այդ, անվտանգութեան ուժերը իրենց յառաջադրուածը կը շարունակեն ու շրջանի պատմական բազմիքին առջև յայտնաբերած են 400 քիլոկրամ պայթուցիկ նիւթ: